ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1962 Общественные науки

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ

Вопросы литературы

«Վոպրոսի լիտերատուրի» ժուռնալի երկրորդ համարի «Ժամանակակից բեմաներ» բաժինը սկսվում է Ի. Անիսիմովի «Գրականագիտության նոր խնդիրները» հոդվածով: Հեղինակը նշում է, որ պարտիայի կողմից Ստալինի անձի պաշտամունքի սկզբունքային քննադատությունը բարերար ներգործություն ունեցավ նաև գրականագիտական մտքի զարգացման վրա: Նա հատկապես ընդգծում է ՍՄԿՊ XXII համագումարի պատմական բացառիկ դերը մեր ժողովրդի հետագա բախտի հարցում, մեր իդեոլոգիայի առաջընթացի, այդ քվում և սովետական գրականագիտության զարգացման գործում: Սակայն, ինչպես իրավամբ նշում է հեղինակը, սովետական գրականագիտությունը դեռևս շատ բան ունի անելու:

Հեղինակը ելնելով Սովետական Միության Կոմունիստական պարտիայի նոր Մրագրում առաջ քաշած այն պահանջից, թե առաջնահերթ նշանակություն է ստանում սովետական բոլոր աշխատավորների գիտական աշխարհայացքի ձևավորման հարցը, ընդգծում է գրականության և գրականագիտության նշանակալից դերը այդ կարևոր խնդրում, և այդ ուղղությամբ էլ բնութագրում գրականագիտության խնդիրները առաջիկա քսանամյակում:

«Գրականությունը և ապագայի մարդը» հոդվածի հեղինակ Ս. Զելինսկին նկատում է, որ համաշխարհային նշանավոր գրողները միշտ էլ մտահոգվել են ապագա մարդու բախտով, ձգտել են ներգործել նրա վրա, երազել լավագույն ապագայի մասին: Պատմական տարբեր ժամանակներում գրողներն ու բանաստեղծները՝ Շելլին, Պուշկինը, Լերմոնտովը և շատ ուրիշներ երազելով մարդկության երջանիկ ապագայի մասին, իրենց ստեղծագործություններում գեղարվեստորեն մարմնավորել են այդ լավագույն գաղափարները:

Հեղինակը նկատում է, որ մարդկության երջանիկ ապագան, ապագայի մարդը՝ իր կոնկրետության մեջ հնարավոր եղավ պատկերացնել միայն մեր օրերում: Պատահական չէ, որ սովետական գրողները շատ ավելի որոշակի են ուրվագծում ապագայի մարդուն՝ իր նոր գծերով: Հոդվածագիրը առանձնապես հիշատակում է Մայակովսկու ստեղծագործությունը, որը նա դիտում է իբրև ապագային ուղղված ստեղծագործություն: Հոդվածում ճշմարտացիորեն նշվում է, որ ժամանակակից էտապում ապագայի մարդու հարցը առավել հրատապ նշանակություն է ստանում, որովհետև պարտիայի նոր Մրագիրը որոշակիորեն դնում է ապագան ստեղծելու, հետևաբար և ապագայի մարդու խնդիրները: Այս ամենը իր կոնկրետության մեջ պետք է դառնա մեր գրականության խնդիրը,— եզրակացնում է հեղինակը:

«Գրականագետի օրագիր» բաժնում տեղավորված է Եվգ. Ժուրբինայի «Կուլտուրայի ժողովրդական համալսարաններում» հոդվածը, ուր հեղինակն ընդգծում է կուլտուրայի համալսարանների մեծ նշանակությունը ժողովրդի հոգևոր դաստիարակության գործում: Ցույց տալով կուլտուրայի համալսարանների ունեցած հաջողությունները, նա միաժամանակ նշում է նաև նրանց գործունեության բացերը և դրանք վերացնելու ուղիները: Այս առնչությամբ հեղինակը նկատում է, որ գրողները հաճախ պետք է հանդես գան կուլտուրայի համալսարանների ունկնդիրների առաջ և դա դիտում է իբրև գեղարվեստական գրականության պրոպագանդման լավագույն աղբյուրներից մեկը:

Գրականության տեսության հարցերին է նվիրված Ն. Ստուրինկևիչի «Ողբերգության պրոբլեմները և ժամանակակից իրականությունը» հոդվածը:

Ժամանակակից բուրժուական գրականության մեջ,— նկատում է հեղինակը,— շատ են գրում ու խոսում ողբերգականի մասին, սակայն ոչ մի առաջընթաց չկա ոչ ողբերգության տեսության մշակման, ոչ նրա գեղարվեստական պրակտիկայի ուղղությամբ: Ողբերգության վերաբերյալ մեր գրականության մեջ էլ եղել են և կան տարբեր կարծիքներ: Հոդվածագիրը հիշտ չի համարում այն տենդենցը, որ իբրև թե մեր իրականության մեջ ողբերգությունը հիմքեր չունի և զարգանալ չի կարող: Ողբերգականը, հերոսա-

կանը, ըստ հոդվածագրի, մեր գրականության մեջ էլ, թե՛ պրակտիկորեն և թե՛ տեսության մեջ իր արժանի տեղը պետք է գրավի: Դրամատուրգիայի պրոբլեմներով զբաղվող սովետական գրականագետների պարտքն է,— մատնանշում է հեղինակը,— ամենայն լրջությամբ և խորությամբ վերլուծել և բնդհանրացնել մեր դրամատուրգիայի փորձը, բացահայտել բուրժուական ժամանակակից դեկադենսի փակուղի մտած դրամատուրգիայի նկատմամբ նրա ունեցած գերակշռությունը, որը արդյունք է սոցիալիստական կարգերի և կոմունիստական իդեոլոգիայի:

Դրականության պատմության հարցերին են նվիրված Դ. Բլագոյի «Դրական ժառանգորդության դիալեկտիկան», Վ. Նեպոմնյաշչու «Կյանքի սիմֆոնիան» և Ն. Սմիրնով-Սոկոլսկու «Գիրք Պուշկինի գրքերի մասին» հոդվածները: «Դրական ժառանգորդության դիալեկտիկան» հոդվածում մասնավորապես քննարկվում է ռուսական XIX դարի կլասիկ գրողների ժառանգորդական կապերը ռուս կլասիկ գրականության նախակարապետների հետ: Այս ուղղությամբ մանրամասն քննարկելով Պուշկինի և Դերժավինի, Պուշկինի և Լոմոնոսովի և այլ հեղինակների հարաբերությունները, նկատում է, թե գրական զարգացման պրոցեսում տեղի է ունենում ոչ միայն լավագույն տրադիցիաների ժառանգում, այլ նաև մերժվում են նախորդների շատ սկզբունքներ, տրադիցիաները և գծերը: Ամրողջացնելով իր միտքը, հեղինակը գրում է, որ գրական ժառանգությունը իրենից, իսկապես, ներկայացնում է որպես բարդ, ներքնապես հակասական մի պրոցես, որտեղ յուրացումը և մերժումը համակցվում են, դիալեկտիկորեն ուղեկցում իրար:

«Կյանքի սիմֆոնիան» հոդվածը նվիրված է Պուշկինի «Մանր տրագեդիաներ» սերիային: Քննարկելով «Ժլատ ասպետը», «Մոցարտ և Սալերի», «Քարե հյուրը» և «Խնջույք ժանտախտի ժամանակ» ստեղծագործությունները, հոդվածագիրը դրանք դիտում է որպես Պուշկին-մտածողի մեծության արտահայտությունները, որոնք ներծծված են կյանքի, մահվան և անմահության վերաբերյալ փիլիսոփայական հայացքներով:

Սմիրնով-Սոկոլսկու հոդվածն ամփոփում է հոդվածագրի ավելի քան երեսնամյա գործունեության արդյունքները, գործունեություն, որի օրոք հրատարակված նրա ստեղծագործությունները, ինչպես և չհրապարակված գործերը:

«Ասիական գրականություն» բաժինը նվիրված է XX—XXII համագումարների միջև ընկած շրջանում ժողովրդական դեմոկրատիայի երկրներում գրականության զարգացման պրոցեսի հարցերին: Այդ հարցի շուրջը տպագրված են Միխայ Նովիկովի «Ներդգրկելի հորիզոններ», Լայոշ Մեշտերխազիի «Արվեստի գաղափարական զինվածությունը», Լյուդմիլ Ստոյանովի «Ամենաառաջադիմական գրականությունը», Դիմիտր Դիմովի «Հումանիստական պաթոս» և Սուան Զյենի «Կենտրոնական պրոբլեմը» հոդվածները:

Այս համարում տպագրված է նաև Մ. Մենդելսոնի «Քաղաքացիական պատերազմի պոեզիան ԱՄՆ-ում» հոդվածը, ուր քննարկելով այդ պոեզիան, միաժամանակ ցույց է տրվում ամերիկյան ժամանակակից բուրժուական գրականության սենդենցիոզ վերաբերմունքն այդ ուղղությամբ:

«Արտասահմանյան մամուլի էջերից» բաժնում նյութեր են տեղավորված Կուբայի գրողների և նկարիչների առաջին կոնգրեսի, Տադեուշ Բոռովսկու հիշատակի, հնդկական գրականության կլասիկ Ռաբինդրանատ Տագորի ծննդյան 100-ամյակի առթիվ և զետեղված է Մ. Լանդորի «Անգլիական վեպը և յակոբինները» հոդվածը:

«Տեսություններ և գրախոսություններ» բաժնում տպագրված են Ա. Խայլովի գրախոսականը Յու. Ռյուրիկովի «100 և 1000 տարի հետո» գրքի, Վ. Գլոցերի գրախոսականը՝ «Սովետական մանկական գրողները» բիբլիոգրաֆիական բառարանի, Ազիզ Շարիֆի գրախոսականը՝ «Անդրկովկասյան ժողովուրդների գրականության պատմությունից» գրքի վերաբերյալ և այլ գրախոսականներ:

Ժուռնալի «Առձգականներ, ռեպլիկաներ, դիտողություններ», «Գրքերի մասին՝ հակիրճ», «Նամակներ խմբագրությանը», «Կատակով և լուրջ» ու «Խրոնիկա» բաժիններում տեղավորված նյութերը լուսաբանում են գրականության տեսության ու պրակտիկայի տարբեր հարցեր:

Բ. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ

ИСКУССТВО

Կերպարվեստի հարցերով զբաղվող Միութենական խոշոր ամսագիրը, իր 25-րդ տարվա նպատակն էր համարել Պուշկինի կենդանության առաջին համարը սկսում է «ՍՄԿՊ XXII համագումարի գաղափարները ոգևորում են մեծ գործերը» խորագրի տակ զետեղված «Խիզախումների ժամանակը» հոդվածով: Հոդվածագիրը՝ ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ, Լենինյան մրցանակի լաուրեատ Ս. Կոնենկովը, առաջ է քաշում մանումենտալ ձևերի, պլաստիկ արվեստի սինթեզի հարցը, արվեստի գործերը ժողովրդի սեփականություն դարձնելու հարցը: Ամրողջական

արվեստի գործ ստեղծելու համար միշ է խորհրդաստ բովանդակությունը, անհրաժեշտ է այդ բովանդակությանը տալ կերպարավոր գեղարվեստական արտահայտիչ մարմնավորում: «Ոչ թե իլյուզիոն ճշմարտանմանություն, այլ աշխարհը հեղափոխող գեղարվեստական ճշմարտացիություն», որը հնարավոր է ձեռք բերել ժամանակակից ձևերի որոնման շնորհիվ: Պարտիայի նոր Պրագրի հեռանկարներով ոգևորված, այն կարող է լուծել ժամանակակից որոնող երիտասարդությունը, քանի որ «միանգամայն օրինաչափ զարգացում է բարդից դեպի խորը պարզություն, որոնումներից՝ հայտնագործում» — գրում է հեղինակը:

Ամսագրում, 1961 թ. Համամիութենական գեղարվեստական ցուցահանդեսը պարբերաբար ճնճարկող հոդվածաշարից, գետեղված է Վ. Զիմնկոյի «Մարդ, բնավորություն, կերպար» խորագիրը կրող հոդվածը: Հիմնականում կանգ առնելով ցուցահանդեսի դիմանկարչական աշխատանքների վրա, հոդվածագիրը ընդհանրացնում և հետաքրքիր եզրակացություններ է հանգում սովետական դիմանկարչության արդի զարգացման վերաբերյալ: Կերպարի բանաստեղծականացումը սովետական դիմանկարչության բնորոշ կողմերից է, բայց այն չպետք է լինի «մակերեսային հերոսականացում, դատարկ շլերբայնություն, էժան պաթետիկա», որպիսի օրինակներ եղել են անցյալում: Երբեմն դիմանկարային կերպարի ճշմարտությունը հասցվում էր պրիմիտիվության, գռեհկացման, իսկ երբեմն մարդկային հասկացողությունը սահմանափակվում էր ինտիմ, մանր զգացումներով: Հեղինակը առաջ է քաշում նաև կերպարի բնավորության բազմակողմանիության և այդ բնավորության մեկ՝ կարևոր կողմի շեշտման հարցը: Առավելությունը տալով վերջինիս, հեղինակը հանգում է այն եզրակացության, որ «կարևոր ոլորտը, որտեղ այն հանդես է գալիս առավել ամրողջական և ուժեղ — աշխատանքային գործունեությունն է», որը հնարավորություն է տալիս հասնելու սոցիալական մեծ ընդհանրացումների: Հեղինակը, սովետական դիմանկարչության զարգացման հետ կապված իր առաջադրած հարցերի մեջ խորանում է հիմնականում բովանդակության առումով, որն ինչ-որ չափով սահմանափակում է հարցադրման ամփոփիչ և օբյեկտիվ լուծումը:

Կյանքի գեղարվեստական արտացոլման ճշմարտության և կերպարավորության ոչ ճիշտ ըմբռնմանն է նվիրված Ֆ. Շապոշնիկովի «Մարմնավորելով կյանքի ճշմարտությունը» հոդվածը, որը նույնպես խարսխված է 1961 թ. Համամիութենական գեղարվեստական ցուցահանդեսի աշխատանքների վրա:

Քաղաքաշինության զարգացման առաջընթացից ետ է մնում մոնումենտալ արվեստը: Սովետական Միության մի շարք քաղաքներում կանգնեցված հուշարձանները առիթ են տալիս խորհելու, որ մի կողմից արվեստի այդ ճյուղերում բացակայում է հասարակական-քաղաքական և կուլտուրական կյանքի երևույթների վերհանման ձգտումը, իսկ մյուս կողմից՝ անվանի մարդկանց կերպարների մեկնաբանման մեջ մուտք է գործել ինչ-որ կոմպոզիցիոն-ձևական միօրինակություն: Այս խնդիրներն են հուզել «Մոնումենտալ արվեստի մի քանի հարցեր» հոդվածի հեղինակ Ն. Վորոնովին: Ֆիգուրալ հուշարձանների փաստագրությունը և ընդհանրացված, ալեգորիկ բնույթի հուշարձանների բացակայությունը հեղինակը բացատրում է երկար տարիներ սոցիալիստական ռեալիզմի սխալ ըմբռնմամբ, որին իբր խորթ են սիմվոլն ու ալեգորիան: Վերջին տարիներին զգալի քայլեր են արվել սովետական մոնումենտալ քանդակագործության մեջ տեղ գտած այդ բացը շտկելու ուղղությամբ: Այդ կապակցությամբ հեղինակը բերում է Սովետական Միության տարբեր քաղաքներում դրված մի շարք հուշարձանների օրինակները, որոնք մոնումենտալ պրոպագանդայի առաջին տարիներին ստեղծված լավագույն աշխատանքների տրադիցիաների օրգանական շարունակությունն են կազմում:

Վերոհիշյալ հոդվածին իր բնույթով անմիջականորեն մոտ է Մ. Նեյմանի ուշագրավ ընդարձակ հաղորդումը, որտեղ նոր փաստերի և լուսանկարների հիման վրա վերականգնվում են մոռացության մատնված հետաքրքիր էջեր մոնումենտալ պրոպագանդայի լենինյան պլանի իրագործման մասին:

Թատերական նկարչությունը կերպարվեստի անհանդուրժելի մոռացված ժանրերից է և հետաքրքիր երևույթ են ամսագրի այս համարում տպագրված Վ. Վանսլովի «Օպերան և դեկորատիվ գեղանկարչությունը» և Ե. Լուցկայայի «Նկարիչը բալետային ներկայացման մեջ» հոդվածները, որտեղ հատկապես շեշտը դրվում է այդ ասպարեզների թատերական նկարչության սպեցիֆիկ կողմերի վրա:

Ամսագիրն իր էջերում զգալի տեղ է հատկացրել արտասահմանյան արվեստագետներին: Հոդվածներից մեկը նվիրված է նշանավոր ռումինացի գրաֆիկ Ժյուլ Փերախիմին, որի արվեստին երևանցիները հնարավորություն ունեցան ծանոթանալու այս տարվա սկզբին՝ Նկարչի տանը բացված ցուցահանդեսի շնորհիվ: Մյուս հոդվածը նվիրված է XIX դարի վերջի և XX դարի սկզբի խոշորագույն քանդակագործներից մեկի՝ Արիստիդ Մայոլի ստեղծագործությանը, արվեստագետի ծննդյան 100-ամյակի առթիվ:

«Հիշողությունների էջեր» հատվածում ռուս

ռեալիստ նկարիչ Կ. Կրիժիցկու մասին է պատմում նրա որդին՝ Գ. Կրիժիցկին: «Քննադատություն և բիբլիոգրաֆիա» բաժնում հետաքրքիր հոդվածներ են տպագրված վերջերս լույս տեսած արվեստաբանական գրքերի և հոդվածների մասին:

Ամսագիրը ընդարձակ տեղ է հատկացրել ինչպես արտասահմանյան արվեստագիտական ամսագրերի ուշագրավ հոդվածների մեկնաբանմանը, նույնպես և Երկրում գեղարվեստական կյանքի հետաքրքիր երևույթներին:

Ամսագրի առաջին համարում կարևոր տեղ են գրավում ՍՍՌՄ նկարիչների միության վարչության 10-րդ պլենումի նյութերը: Պլենումը քննարկում էր «ՍՄԿՊ XXII համագումարի որոշումները և ՍՍՌՄ նկարիչների միության խնդիրները» թեմայով Ս. Դերասիմովի զեկուցումը: Այդ կապակցությամբ տպագրված է նաև պլենումի դիմումը՝ ուղղված ՍՍՌՄ նկարիչների միության բոլոր անդամներին:

Ամսագրի առաջին և երկրորդ համարներում շոշափվում են հրատապ տեսական հարցեր՝ կապված սովետական կերպարվեստի զարգացման արդի վիճակի հետ: Այդ կարգի հարցադրումներով նյութերը հիմնականում զետեղված են 1961 թ. Համամիութենական գեղարվեստական ցուցահանդեսի աշխատանքներին նվիրված բաժնում:

«Ժամանակ, աշխատանք, կյանք» խորագիրը կրող հոդվածում հեղինակը՝ Վ. Դոչկովը՝ հիմք ընդունելով ցուցադրված թեմատիկ-կոմպոզիցիոն կտավները բացահայտում է այն նորը, որ ցուցահանդես են բերել նկարիչները: Ժամանակակից կյանքի բազմակողմանի պատկերման հետ մեկտեղ ցուցահանդեսում ներկայացված են նաև կենսազուրկ, գեղարվեստական խոր ընդհանրացումների չհասնող աշխատանքներ, որոնք և իրավացիորեն քննադատվում են հոդվածում: Ցուցահանդեսի բնանկարների և նատյուրմորտների վերլուծմանն է նվիրել իր հոդվածը Ն. Կոստին: Կերպարվեստի այդ ժանրերը համեմատաբար բույլ են ներկայացված այս ցուցահանդեսում: Ցուցադրված աշխատանքների թվում իրոք կան բազմաթիվ բնանկարներ ու նատյուրմորտներ, որոնք հուզում են իրենց ամբողջականությամբ, ռոմանտիկայով, լիրիկականությամբ կամ էպիկական շնչով: Սակայն այդ կարգի աշխատանքներին մեծ մասամբ պակասում է փիլիսոփայական խորությունը, մոնումենտալությունը և կատարողական ավարտվածությունը, որը և իրավամբ քննադատության է ենթարկում հոդվածագիրը:

Ցուցահանդեսի քանդակագործական աշխատանքների հետ խորը ծանոթություններ հնարավորություն է տալիս տեսնելու այն առաջընթացը, որ ապրել է սովետական քանդակագործությունը վերջին մի քանի տարիների ընթացքում: «Մոնումենտալը և կամերայինը» հոդվածի հեղինակ Վ. Լերլեր իր հարցադրման լուծումը կառուցել է միայն Մոսկվայի քանդակագործների աշխատանքների վրա և հանգել այն եզրակացության, որ սովետական ժամանակակից քանդակագործությունը ազատագրվել է իր նախկին պատմողական բնույթից, բեմատիկ-իլյուստրատիվ լուծումից, կեղծ պարետիկայից: Ամենափոքր ցուցահանդեսային աշխատանքները անգամ զուրկ են հուշարձան դառնալու ձգտումից և հագեցված են հաստոցային պլաստիկայի հարուստ հնարավորություններով:

Ի. Շմիդտի հոդվածում խոսվում է դիմանկարի ժանրում արվեստագետների որոնումների և ձեռք բերած հաջողությունների մասին: Հոդվածագիրը այլ աշխատանքների թվում բարձր գնահատական է տալիս նաև Ն. Նիկոլոսյանի «Քանվոր» դիմանկարին, բնորոշելով այն որպես «ցուցահանդեսի հոյակապ դիմանկարներից մեկը»: Իսկ ամսագրի 2-րդ համարի շապկի վրա զետեղված է Ղ. Զուրաբյանի «Զոզոզի դիմանկարը» աշխատանքի լուսանկարը:

Ֆ. Սիրկինայի «Սովետական բեմատիկան կարևորն է» և Տ. Սեմյոնովայի «Որտե՞ղ է սատիրան» հոդվածներում շոշափվում են ցուցահանդեսի բատերական նկարչության և ծաղրանկարչության զարգացման հետ կապված մի շարք հարցեր:

«Դեպի նկարիչների Երկրորդ համագումարը» բաժնում զետեղված է Ս. Վալերիուսի հոդվածը, որը Թբիլիսիի հուշարձանների հիման վրա ջոշափում է ժամանակակից քաղաքաշինության և արվեստի սինթեզի հետ կապված հարցեր:

Տ. Կովալենսկայայի հոդվածը՝ «Նկարիչ, էքսկուրսավար, հանդիսական» նվիրված է կոմունիստական դաստիարակության մեջ կերպարվեստի դերին, որն իրագործելու հարցում մեծ դեր է խաղում նաև էքսկուրսավարը: Կարևորը նկարի սյուժեն վերարտադրելը չէ, այլ այն գեղարվեստա-փիլիսոփայական անալիզը, որի շնորհիվ արվեստի աշխատանքը ստանում է իր գաղափարական լրիվ հնչողականությունը և ամբողջովին նասնում հանդիսականին: Մինչ այժմ, ար-

վեստագիտական դրականության մեջ հազվադեպ են այդ մասնագիտության մարդկանց կարևոր դերը բնորոշող հոդվածները: Տ. Կովսլենսկայայի նյութը ամսագրի երկրորդ համարում, որոշ չափով լրացնում է այդ բացը:

Ամսագրի այս տարվա առաջին երկու համարներում նյութեր կան նաև ետպատերազմյան շրջանի սլովակյան գեղանկարչության և գրաֆիկայի զարգացման հարցերի մասին: Ամսագրում տպագրված հոդվածները ստացվել են Բրատիսլավի «Վիտվարեն ժիվոտ» ամսագրի միջոցով: Կարելի է ծանոթանալ նաև գերմանական խոշորագույն գրաֆիկներից մեկի՝ Մաքս Լինդերի ստեղծագործական կյանքին, որն ամբողջապես նվիրված էր մարդկության լուսավոր ապագային:

Գեղագիտական դաստիարակության թեմաներով տպագրված Ն. Վորոնովի հոդվածում առաջ է քաշվում այն խնդիրը, որ ժամանակակից մարդու զարգացման համար անհրաժեշտ կարևորություն են ներկայացնում նաև անցյալի մշակույթի էջերի ուսումնասիրությունը և հատկապես միջնադարյան գեղանկարչությունը, քանդակագործությունը և կիրառական արվեստը:

Ամսագրի համարներում հետաքրքիր տեղեկություններ կան նաև «Նոր գրքեր»-ի և հուշագրությունների բաժիններում:

ՄԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ